AMERIABANK

15.12.2022թ.
O.AB.100.12CIB.PIED.0.30641.22

Բենեֆիցիար՝
Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.30641.22
(ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «Հայնախագիծ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընդհանրապետ) միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-22/4 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված կանխավճարի տրամադրման շրջանակում Պայմանագրով նախատեսված Ընդհանրապետի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 11,250,000.00 (տասնմեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի՝ Պահանջում նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Երաշխիքը տրվում է մեկ օրինակից և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխիք տվող անձի կողմից:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում թողարկման պահից և գործում է մինչև 05 սեպտեմբերի 2023թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած:

6. Կանխավճարը փոխանցվում է Բենեֆիցիարի կողմից Ընդհանրապետի՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացված թիվ 1570015669240100 դրամային հաշվարկային հաշվին:

7. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

7.1) թիվ ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-22/4 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

7.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

8. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

9. Երաշխիք տվող անձի կողմից Բենեֆիցիարի Պահանջի հիման վրա վճարում կատարելու դեպքում Երաշխիքի գումարը նվազում է համապատասխան գումարի չափով:

10. Երաշխիքի գումարը նվազեցվում է նաև Բենեֆիցիարի կողմից այդ մասին Երաշխիք տվող անձին գրավոր դիմում տալու միջոցով:

11. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող Պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման պահանջ ներկայացնելու Երաշխիք տվող անձին սպասարկող ցանկացած բանկ՝ բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի, Երաշխիք տվող անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել Երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն Երաշխիքի իր օրինակը:

12. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող Պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի 11-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ Պահանջում նշված վճարման ենթակա գումարի 0.05 տոկոսի չափով:

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
(+374 10) 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou

13. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե Պահանջը ներկայացվել է Երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո և/կամ Երաշխիքով ապահովվող՝ 11,250,000.00 (տասնմեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ կանխավճարը Բենեֆիցիարի կողմից ամբողջությամբ չի մուտքագրվել Պրինցիպալի՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացված թիվ 1570015669240100 դրամային հաշվեհամարին:

14. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

15. Սույնով Բենեֆիցիարը համաձայնություն է տալիս այն մասին, որ իր կողմից Երաշխիքի բնօրինակը և Երաշխիք տվող անձին Երաշխիքով սահմանված պարտավորություններից ազատելու մասին գրավոր դիմումը Երաշխիք տվող անձին տրամադրվելու դեպքում դադարում են Երաշխիքից բխող՝ Երաշխիք տվող անձի հանդեպ Բենեֆիցիարի իրավունքները:

16. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

17. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

18. Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (tender4@minurban.am):

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

«AMERIABANK» CJSC CORPORATE AND INVESTMENT BANKING DEPARTMENT FOR CONTRACTS AND DOCUMENTS